ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

«02» 03 2015թ.

հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am

ՀՀ Լոռու Մարզպետ

պր-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ավագանու 2015թ. թիվ 2-ից 6 որոշումները:

առդիր 7 թերթ

Համայնքի ղեկավար՝ ------------------------------- Գ. Պայյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 2

«02» 02 2015թ.

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. am

## Մեծ Պարնի համայնքի 2014 թվականի վարչական բյուջեի 4657 հոդվածից դասակարգում 04/02/01 գումար հատկացնելու մասին

Քանի որ Մեծ Պարնի համայնքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ –ի կողմից իրականացվում է ծրագիր և առկա է եռակողմ պայմանագիր «ԳԾԻԳ»ՊՀ-ի, Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետարանի և «Մեծ Պարնի համայնքի արտոգտագործողների միավորում » սպառողական կոպերատիվի միջև , որի շրջանակներում 167 տնտեսությունից բաղկացած կոպերատիվին տրամադրվելու է գյուղտեխնիկա , որի 50% ներդրումը պետք է կատարի «ԳԾԻԳ»ՊՀ-ն և հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Մեծ Պարնի համայնքի ավագանին

Որոշում է

Թույլատրել Համայնքի ղեկավարին Մեծ Պարնի համայնքի վարչական բյուջեի 4657 հոդվածից դասակարգում 04/02/01 (երեք միլիոն) 3000000 դրամ, որպես համաֆինանսավորում հատկացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ –ին գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու նպատակով:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Ավալյան Վազգեն | | | |
| Զոթյան Անդրանիկ | | | |
| Գաբրիելյան Հովիկ | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Առաքելյան Գևորգ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ-----------------------------Գ. Պալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. am

## ՈՐՈՇՈՒՄ

« 23 » փետրվարի 2015 թվականի N 3- Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով

Մեծ Պարնի համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Մեծ Պարնի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Մեծ Պարնի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 25-ի N 11-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 2-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | [signature] | | |
| Ավալյան Վազգեն | [signature] | | |
| Ջոթյան Անդրանիկ | [signature] | | |
| Գաբրիելյան Հովիկ | [signature] | | |
| Գասոյան Կարեն | [signature] | | |
| Առաքելյան Գևորգ | [signature] | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ -------------------------------Գ. Պալյան*

*Հավելված*
*Մեծ Պարնի գյուղական համայնքի ավագանու*
*2015թվականի փետրվարի 23-ի N 3-Ա որոշման*

## ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝13:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ հազար դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 196.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 125.0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 100.0 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 125.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ հաշվապահ | 1 | 123.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 3 | 123.0 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 105.0 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 66.14 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| Վարորդ | 1 | 92.0 |
| Հավաքարար | 1 | 66.14 |
| Տեխնիկական աշխատող | 1 | 66.14 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 13 | 1187.42 |

Համայնքի ղեկավար՝ ______________ Գ. Պալյան
ստորագրություն          անուն, ազգանուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. am

## ՈՐՈՇՈՒՄ

« 23 » փետրվարի 2015 թվականի N 4- Ա

ՄԵԾ ՊԱՐՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐԻՔՆԱԶ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 27-ի թիվ 30 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող , քաղաքացի Հերիքնազ Նազարյանի սեփականություն հանդիսացող և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի վարձակալությամբ տրամադրված 06-075-0021-0008 ծածկագրով 0.01 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը , էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքային օբյեկտների հողերի նպատակային նշանակությունը , կապի հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:
2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմվա հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցմանը՝ ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Ավայյան Վազգեն | | | |
| Զոթյան Անդրանիկ | | | |
| Գաբրիելյան Հովիկ | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Առաքելյան Գևորգ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`-----------------------------Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ № 5-Ն

«26» 02 2015թ.

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. ru

### Մեծ Պարնի համայնքի 2014թ. բյուջեի կատարման մասին համայնքի ղեկավարի հաշվետվությունը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել Մեծ Պարնի համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2014թ. բյուջեի կատարման վերաբերյալ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | [signature] | | |
| Ավալյան Վազգեն | [signature] | | |
| Զոթյան Անդրանիկ | [signature] | | |
| Գաբրիելյան Հովիկ | [signature] | | |
| Գասոյան Կարեն | [signature] | | |
| Առաքելյան Գևորգ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ------------------------------Գ. Պալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. (0255) 6– 18 - 97
E-mail: metsparni.lori@mta.gov. am

## ՈՐՈՇՈՒՄ

« 26 » ______02_____ 2015 թվականի N 6

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամ Մեծ Պարնի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 27-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Ավալյան Վազգեն | | | |
| Զոթյան Անդրանիկ | | | |
| Գաբրիելյան Հովիկ | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Առաքելյան Գևորգ | | | |

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 26-ի N 6 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Մանուկյան Սեյրանին որպես հարազատին կորցրածի 50000 (հիսուն հազար) դրամ,
2) Ղալլաքյան Գայանե 50000 (հիսուն հազար) դրամ,
3) Զոթյան Սամվել Գ. 20000 (քսան հազար) դրամ,
4) Քյասինյան Նորիկ 25000 (քսան հինգ հազար) դրամ,
5) Աքույան Էդիկ 50000 (հիսուն հազար) դրամ,
6) Ուստյան Սիրանուշ 15000 (տասնհինգ հազար) դրամ,
7) Հակոբյան Ալինա 50000 (հիսուն հազար) դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 260000 (երկուհարյուրվաթսուն հազար) դրամ:

ՄԵԾ ՊԱՐՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. Գասոյան